# Տեղական Լուրեր



## Նախագահ Շիշէքլի կոչ կ՚ուղղէ Սուրիոյ ժողովուրդին

ԴԱՄԱՍԿՈՍ.— Նախագահ Շիշէքլի այսօր կէսօրէ ետք ժամը 2.15ին, կոչ մը պիտի ուղղէ Դամասկոսի ռատիոկայանէն ողջունած Սուրիոյ ժողովուրդին, Ուրբաթ օր տեղի ունենալիք ընտրութեան առթիւ։

## Ընտրապայքարը վերջ գտաւ

ԴԱՄԱՍԿՈՍ.— Ներքին գործոց փոխ նախարար Լիուա Րիֆաթ Խանգան հաղորդագրութիւն մը հրատարակեց, ուր կը յայտնէ, թէ ըստ ընտրական Օրէնքին, ընտրապայքարի աշխատանքները Չորեքշաբթի առաւօտ վերջ կը գտնեն։

Ապա նախարարը հրահանգեց բոլոր մուհաֆըզներուն և գայմագամներուն որ անմիջապէս քննեն թեկնածուներու կողմէ եղած որևէ բողոք։

## Փոխան ծաղկեպսակի

Հանգուցեալ ՍՈՒՐԷՆ ՃԻՄԷԼԵԱՆԻ մահուան տխուր առթիւ, Պր. Արամ Շորվոյեան 500 Ս. Դահեկան կը նուիրէ «Սուրիա»յի ֆոնտին, փոխան ծաղկեպսակի։

## Ինքնաշարժի վարիչ փնտռողներուն

Ինքնաշարժի երիտասարդ վարիչ մը, որ մեքենագիտութիւն ալ գիտէ միևնոյն ատեն, գործ կը փնտռէ։

Ան անձնական ինքնաշարժ վարելու արտօնութիւն ունի։

Դիմել «Սուրիա»ի խմբագրութեան։


ԱՊԱՀՈՎԵՑԷՔ

ՁԵՐ ԴԱՍԱԳԻՐՔԵՐԸ, ՏԵՏՐԱԿՆԵՐԸ ԵՒ ԱՅԼ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՅՔՆԵՐԸ

ԳՐԱՎԱՃԱՌ — ԹՂԹԱՎԱՃԱՌ

Վահան Տարագճեանէն

ՀՐՇԷՋՆԵՐՈՒ ՓՈՂՈՑ, ՀԱԼԷՊ

ՀԵՌԱՁԱՅՆ 14928

ՑԻՇԵԱԼ ԳՐԱՏԱՆ ՄԷՋ ԿԸ ԳՏՆՈՒԻՆ ԸՆՏԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Մատչելի Գին


## Արժ. Տէր Ներսէս Աւագ Քահանայ Պապայեան ապաքինած



Ուրախութեամբ կ՚իմանանք թէ Ս. Աստուածածնայ եկեղեցւոյ աւագերէց Տէր Ներսէս Աւագ Քահանայ Պապայեան, որ երկար ատենէ ի վեր անկողնոյ կը ծառայէր, ու Լիբանան մեկնած դարմանումի, ապաքինած ըլլալով Հալէպ վերադարձած է։

Բարի գալուստ կը մաղթենք արժանապատիւ Տէր Հօր։

## Գ. Վասպուրականի միջ-մասնաճիւղային Ախոյեանական վերջին մրցումներ

| Բ. ԴԱՍ | Ա. ԴԱՍ |
|---|---|
| «ՋԷՅԹՈՒՆ» | «ԱՐԾԻՒ» |
| ԸՆԴԴԷՄ | ԸՆԴԴԷՄ |
| «ԿՈՎԿԱՍ»Ի | «ԳԵՐՄԱՆԻԿ»Ի |
| ԺԱՄԸ 1.30ԻՆ | ԺԱՄԸ 3ԻՆ |
| ԻՐԱՒԱՐԱՐ | ԻՐԱՒԱՐԱՐ |
| ՊՐ. ԳՐԻԳՈՐ ՊՈՒՐՃԼԵԱՆ | ՊՐ. ՏԻԳՐԱՆ ՉԱՐԸՔԵԱՆ |

Կիրակի, 11 Հոկտեմբեր 1953, կէսօրէ վերջ ժամը 1.30էն սկսեալ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆի դաշտին վրայ։

Կարդացէ՛ք ՍՈՒՐԻԱ օրաթերթը


# ՄԽԻԹԱՐԵԱՆ
## ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Հեռաձայն թիւ 13542-Հալէպ

Վարժարանս կը վերաբացուի 5 Հոկտեմբերին։

Արձանագրութիւնները կը սկսին 15 Սեպտեմբերին առաւօտ՝ ժամը 9-12 կէսօրէ վերջ ժամը 4-6։

Կ՚ընդունուին ԳԻՇԵՐՕԹԻԿ և ՑՈՐԵԿՕԹԻԿ հայ աշակերտներ։

Վարժարանիս մէջ կ՚աւանդուին հայ լեզուի և հայ պատմութեան հետ օտար լեզուներ — Արաբերէն, Ֆրանսերէն և Անգլերէն։

Վարժարանս կու տայ հայ ազգային դաստիարակութիւն և կը կերտէ հայ մարդը բարձր և ազնիւ նկարագրով։

Լաւագոյն միջոցներով կը պատրաստուին աշակերտներ ԱՐԱԲԱԿԱՆ ՍԵՐԹԻՖԻՔԱՅԻ ԵՒ ՊՐԷՎԷԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ։

Երեք տարուան մեր աշակերտներուն պետական քննութիւններուն մէջ ձեռք բերած նախանձելի յաջողութիւնը լաւագոյն ապացոյցն է վարժարանիս ուսումնական բարձր մակարդակին։

Գիշերօթիկներու ընդունելութեան պայմաններուն համար դիմել Վարժարանիս Տնօրէնութեան։

ԾԱՆՕԹ.— Վարժարանս ունի փոխադրութեան համար, ինքնաշարժի կանոնաւոր սպասարկութիւն։

Հասցէ.— Collège Mékhtariste B. P. 951, ALEP Syrie






Հասած են «ԼՈՐԵՆՑ» գերմանական հռչակաւոր ռատիոներ, ուզածնիդ ընտրեցէք։ 25 Ս. ոսկի ամսավճարով և փոքր՝ 1 սերիայ համար։

ԾԱՆՕԹ.— Գամիշլիի և Ճէզիրէի շրջանին համար կը փնտռուին ներկայացուցիչներ։

Դիմել՝ ՍՈՒՐԷՆ ՓԷՇԼԵԱՆ փոխադրութիւն, Թիլէլ
հեռաձայն 13537, Հալէպ
Ինչպէս նաև Ֆոթօ Աւետիսի մօտ, Նոր Գիւղ։



قرية «طوبران» الزراعية

الواقعة بقضاء جرابلس

تبعد عن الخط الحديدي ٣ كيلو متر

معروضة للبيع

المراجعة والتفصيلات

مع السيد خليل العجيلي رئيس الخزينة بحلب

هاتف : ١٠٩٠١ او ١٥٩٤٦

ԾԱԽՈՒ ԳԻՒՂ

Ծախու է «ԹՈՒԻՐԱՆ» գիւղը, որ Ճարապլուսի շրջանը կը գտնուի և 3 քիլոմէթր հեռու է երկաթուղագծէն։

Մանրամասնութիւններու համար դիմել պետական գանձի Հալէպի պետին, Պր. Խալիլ էլ Իճէյլիի, հեռաձայն թիւ 10701 կամ 15946


## ՍԱԿԱՐԱՆ

ԹՂԹԱԴՐԱՄ

| | |
|---|---|
| Տոլար | 355 |
| Սթեռլին | 960 |
| Ֆրանսական 1000 Ֆրանք | 900 |
| Զուիցերիական Ֆրանք | 82,00 |
| Պելճիքական Ֆրանք | 6,50 |
| Եգիպտական | 850 |
| Յորդանանեան | 900 |
| Տինար | 950 |
| Թրքական | 65.00 |
| Լիբանանեան | 108,00 |

ՈՍԿԵԴՐԱՄ

| | |
|---|---|
| Անգլիական | 34,25 |
| Օսմ. Թիւնարի | 31,50 |
| Օսմ. Րէշատի | 27,50 |